# Աշխարհահռչակ բժիշկ-գիտնականը

## ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ ՖԱՆԱՐՋՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 115-ԱՄՅԱԿԸ



Կյանքում փառավոր ուղի է անցել մեծատաղանդ բժիշկ-գիտնական, Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, Սովետական Միության բժշկական գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, գիտության վաստակավոր գործիչ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բարդուղիմեոս Հարությունի Ֆանարջյանը: Նրա անվան հետ են կապված Հայաստանում ռենտգենառադիո-ուռուցքաբանության ծառայության հիմնադրումն ու պարգացումը, ինչպես նաև ռենտգենաբանների գիտական դպրոցի ստեղծումը:

Բ. Հ. Ֆանարջյանը ծնվել է 1898 թվականին Ախալցխա քաղաքում, արհեստավորի ընտանիքում: Նախնական կրթությունն ստացել է Աբաս-Թումանում: 1912 թվականին ընդունվել է Թիֆլիսի առևտրական ուսումնարանը: Այստեղ սովորելու տարիներին էլ արթնացել է սերը բժշկության նկատմամբ: 1918 թվականին նա ընդունվել է Անդրկովկասյան համալսարանի բժշկական ֆակուլտետը: Ուսումնառության տարիներին առանձնահատուկ ջանասիրությամբ սկսել է ուսումնասիրել բժշկագիտություն: 1923 թ. համալսարանում դասերը ժամանակավորապես դադարեցվում են, նա ստիպված տեղափոխվում է Բաքվի համալսարան և 1924 թվականին ավարտում բժշկական ֆակուլտետը: Նորավարտ բժիշկը վերադառնում է Թիֆլիս և նշանակվում ռենտգենաբան:

Մեկ տարի անց Ֆանարջյանը հրավիրվում է Երևան և անմիջապես գործուղվում Գերմանիա՝ ռենտգենաբանության գծով կատարելագործվելու: Այնտեղից նա իր հետ բերում է անհրաժեշտ որոշ սարքավորումներ և ձեռնամուխ լինում հանրապետական կլինիկական հիվանդանոցի ռենտգեն- ռադիոլոգիական բաժանմունքի ստեղծմանը: 1936 թվականին նրա նախաձեռնությամբ և ղեկավարությամբ Երևանի բժշկական ինստիտուտում կազմակերպվում է ռենտգենաբանության ամբիոն: Երիտասարդ մասնագետը մանկավարժական գործունեությունը զուգակցում է գիտահետազոտական աշխատանքին և հաջողությամբ լուծում ռենտգենաբանության հետ կապված մի շարք պրակտիկ հարցեր: Նրա բազմաթիվ գիտական աշխատանքներ վերաբերում են ստամոքսի (քաղցկեղ, խոց, բորբոքումներ) բարակ և հաստ աղիքների, սրտի, թոքերի, ոսկրային համակարգի հիվանդությունների ռենտգենաբանությանը, խոնացնող ճառագայթների կենսաբանական ազդեցության և չարորակ ուռուցքների բուժման հարցերին: Նրան են պատկանում ստամոքսի լորձաթաղանթի նորմալ և ախտաբանական փոփոխությունների ենթարկված ռելիեֆի վերաբերյալ ռուսերեն առաջին աշխատությունները: Նա մեր երկրում առաջիններից էր, որ զբաղվեց ստամոքսի քաղցկեղի և մի շարք հիվանդությունների ժամանակ ստամոքսի լորձաթաղանթի ուսումնասիրությամբ և նկարագրեց նրա ախտորոշիչ կարևոր նշանակությունը ռենտգենաբանության գրեթե բոլոր բնագավառներում և իր ամենօրյա գործունեությամբ նպաստեց պրակտիկ առողջապահությանը ցույց տրվող օգնության հաջող կազմակերպմանը:

Մասնագետների բարձր գնահատականին է արժանանում նրա "12-մատնյա աղիքի ռենտգենախտորոշումը" աշխատությունը, որը որպես դիսերտացիա պաշտպանելով, ստանում է բժշկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան և պրոֆեսորի կոչում: Ռենտգենյան ախտորոշմամբ բացահայտել է 12-մատնյա աղիքի խոցի դիրքը որոշելը, որը բժշկագիտության մեջ հայտնի է "Բ. Հ. Ֆանարջյանի օրինաչափությունը" անվանումով:

Ֆանարջյանի աշխատանքները անմիջապես գրավում են մասնագետների ուշադրությունը: 1941 թվականին նա ընտրվում է Մոսկվայի բժիշկների կատարելագործման կենտրոնական ինստիտուտի ռենտգենաբանության ամբիոնի վարիչ: Սակայն սկսվել էր պատերազմը, և նա վերադառնում է Երևան ու շարունակում ղեկավարել բժշկական ինստիտուտի ռենտգենաբանության ամբիոնը:

1946 թվականին Ֆանարջյանի նախաձեռնությամբ և ակտիվ մասնակցությամբ Երևանում հիմնադրվում է Հայաստանի առողջապահության մինիստրության ռենտգենաբանության և ուռուցքաբանության գիտահետազոտական ինստիտուտը, որի անփոփոխ տնօրենն ու գիտական ղեկավարն էր նա մինչև իր կյանքի վերջը: Նրա շնորհիվ էր, որ ինստիտուտը կարճ ժամանակամիջոցում դարձավ գիտահետազոտական կենտրոն ու դասվեց Սովետական Միության մասնագիտական խոշոր օջախների շարքը: Անվանի գիտնականն իր շուրջը համախմբելով շնորհալի շատ մասնագետների, ստեղծեց հայ ռենտգենաբանների գիտական դպրոց, որի բազմաթիվ ներկայացուցիչներ հետագայում դուրս եկան միջազգային ասպարեզ և իրենց խոսքն ասացին ռենտգենաբանության բնագավառում:

Շուրջ 50 տարի Ֆանարջյանը նվիրվել էր մանկավարժական աշխատանքի, պատրաստել ռենտգենաբանների բազմաթիվ կադրեր:

Իր աշխատանքային գործունեության առաջին տարիներից սկսած, ռենտգեն-ախտորոշումից բացի Ֆանարջյանը զբաղվում էր նաև ռենտգենաբուժման հարցերով՝ դառնալով հանրապետությունում նրա հիմնադիրներից մեկը:

Գիտամանկավարժական բեղմնավոր գործունեության ընթացքում Ֆանարջյանը գրել է բազմաթիվ գիտական աշխատություններ, այդ թվում՝ 22 արժեքավոր մենագրություն, ուսումնական ձեռնարկ ու դասագիրք:

Նրա բազմաթիվ աշխատություններ հրատարակվել են գերմաներեն, անգլերեն, ֆրանսերեն և այլ լեզուներով: Սովետական Միության բժշկական ինստիտուտներում տարիներ շարունակ պաշտոնական են ճանաչվել նրա դասագրքերը, որոնք համապատասխանում էին ուսումնական ծրագրին և ունեին գիտական բարձր մակարդակ: Դրանք մեծ գնահատականի են արժանացել նաև Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Գերմանիայում, Ավստրալիայում, Հոլանդիայում, Կորեայում և այլ երկրներում, իսկ Չինաստանում և Ռումինիայում թարգմանվել են ազգային լեզուներով և երկար տարիներ օգտագործվել բժշկական ինստիտուտներում:

Ֆանարջյանը գիտական սերտ կապերի մեջ էր գտնվում սովետական և արտասահմանյան մի շարք անվանի գիտնականների հետ, որոնք չափազանց բարձր էին գնահատում հայ մեծ ռենտգենաբանին: Նա իր ակտիվ մասնակցությունն է ունեցել ռենտգենաբանների և ուռուցքաբանների միջազգային կոնգրեսներին: Մեխիկոյում, Մյունխենում, Մոնրեալում, Հռոմում, Տոկիոյում, Սոֆիայում և մի շարք այլ քաղաքներում նրա կարդացած զեկուցումներն արժանացել են մասնագետների բարձր գնահատականին:

Ֆանարջյանի նախաձեռնությամբ կազմակերպվել են նաև հանրապետական ուռուցքաբանական դիսպանսերը, ռադիոկենսաբանության բաժանմունքը, սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտը:

Անվանի գիտնականը նաև հասարակական ակտիվ գործիչ էր: Ռենտգենաբանների և ուռուցքաբանների հանրապետական գիտական ընկերության նախագահն էր՝ ստեղծման օրից մինչև իր կյանքի վերջը: Եղել է մի շարք գիտական ընկերությունների նախագահ, ՍՍՀՄ ռենտգենաբանների ու ռադիոլոգների գիտական ընկերության նախագահության պատվավոր անդամ: Նա երկար տարիներ ղեկավար աշխատանք է կատարել Հայաստանի գիտությունների ակադեմիայում՝ միաժամանակ խմբագրելով "Էքսպերիմենտալ և կլինիկական բժշկություն" հանդեսը:

Ֆանարջյանը պարգևատրվել է Լենինի, Աշխատանքային կարմիր դրոշի, "Պատվո նշան" շքանշաններով, մի շարք մեդալներով:

Աշխարհահռչակ գիտնականի սիրտը դադարեց բաբախելուց 1976 թվականին: Նրա պայծառ հիշատակը հավերժացված է իր գիտական մեծարժեք աշխատություններով, որոնցից այսօր էլ շարունակում են օգտվել շատ-շատերը: Բ. Հ. Ֆանարջյանի անունով է կոչվում Ուռուցքաբանության Ազգային կենտրոնը Երևանում:

### ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ ՖԱՆԱՐՋՅԱՆԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

* * *

Ձեր հոդվածը տպագրել ենք, և մեզ համար մեծ պատիվ կլինի, եթե պրոֆեսորը նոր նյութեր ուղարկի ամսագրին:

*"Նարոդ ի պդորովյա" ամսագրի տնօրեն ՎԱՏԵՐՍՏԱՏ,*
*Բեռլին*

* * *

...Շատ ուրախ կլինեմ, եթե ուղարկեք Ձեր աշխատանքը՝ նվիրված աղեստամոքսային համակարգի ֆունկցիոնալ փոփոխություններին:

*Պրոֆ. Պֆեյֆեր ԻՈԽԻՄԻ,*
*Լայպցիգ*

* * *

Ես ստացա Ձեր գիտական աշխատությունների ժողովածուն: Ձեր ուղարկածը բարեկամական արտահայտություն է: Փոխարենը ուղարկում եմ մեր աշխատությունները: Մենք՝ գիտական աշխատողներս, Ձեզանից սովորեցինք, թե ինչպես վարվել իրար հետ, և այժմ մտածում ենք նույնը սովորեցնել մեր քաղաքական գործիչներին:

*Պրոֆ. Ռոբերտ ԷՆԴՐՈՒՍ,*
*ԱՄՆ*

* * *

Խնդրում եմ ընդունել իմ շնորհակալությունը ուղարկված գիտական աշխատությունների համար: Սիրով եմ ծանոթանում Ձեր և Ձեր կոլեգաների գիտական աշխատանքներին, որոնք հետաքրքրում են մեզ ուռուցքաբանական ընդհանուր հարցերի լուծման բնագավառում:

*Պրոֆ. ՄՆԵԳԻՐՈՎ,*
*Բոստոն*

* * *

...Ամբողջ սրտով շնորհավորում եմ և ուրախանում, որ Ձեր աշխատանքներից ունեմ, որոնցից օգտվում են և կօգտվեն ներկա և ապագա սերունդները:

*Պրոֆ. Վեսլեն ՄԻԽԱՅԼՈՎ,*
*Սոֆիա*

* * *

... Խորին շնորհակալություն եմ հայտնում Ձեր ինստիտուտի գիտական աշխատանքների ժողովածուի համար: Այն մեծ նշանակություն ունի ուռուցքաբանության բազմաթիվ գիտական հարցերը լուծելու համար:

*Պրոֆ. ԳԻՏՑԵԼԴ,*
*Բեռլին*

* * *

... Ձեր գիրքը կարդացի մեծ բավականությամբ, և այն հաճելի տպավորություն թողեց: Գիրքը վերլուծում է մասնագիտական հարցերի ժամանակակից դրվածքը: Զգացվում է Ձեր մեծ փորձը աղեստամոքսային համակարգի հիվանդությունների ախտորոշման վերաբերյալ, ընկալման Ձեր մեծ ընդունակությունը: Դուք խորհրդային այն ռենտգենաբաններից եք, որ տեխնիկական տեսակետից "հասել և անցել" է արտասահմանյան մեր կոլեգաներից:

... Անկեղծորեն ուրախանում եմ Ձեր մեծ և մշտապես աճող գիտական ակտիվությամբ: Որքան հեռու է գնում ռենտգենաբանությունը և ուռուցքաբանությունը Հայկական ՍՍՀ-ում, որտեղ նկատելի է Ձեր անձնական մեծ ծառայությունը:

*Պրոֆ. ՌԵՅՆԲԵՐ,*
*Մոսկվա*